ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2.64
Ծածկագիրը՝«ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/18»

ք. Երևան «13» ապրիլի 2018թ.

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության Գլխավոր տնօրեն Ա. Գասպարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Մադէլ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ.Գասպարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ընել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **2 836 800 (երկու միլիոն ութ հարյուր երեսունվեց հազար ութ հարյուր) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման

արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության

արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական

հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ	«Մադէլ» ՍՊԸ
ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ	ք. Երևան, Մ.Ավետիսյան 8ա, բն.18
Ի.Գասպարյան 33	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, «Զեյթուն» մ/ճ
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ	h/h 163598002315
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ	ՀՎՀՀ 00907267
ՀՎՀՀ 01216144	
Գլխավոր տնօրեն	**Տնօրեն**
_____ Ա.Գասպարյան	_____ Մ.Գասպարյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 13 » ապրիլի 2018 թ. կնքված
N 2.64 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի											
Հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	Չ/մ	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	18130000/4	Հատուկ արտահագուստ՝ էլ. զոդողի հատուկ համազգեստ	«Մադէլ» ՍՊԸ, ՀՀ	էլ. զոդողի հատուկ համազգեստ, բաղկացած է բաճկոնից և տաբատից: Հիմնական կտորը՝ բրեզենտ:Գործվածքը՝ 50 % վուշ և 50 % բամբակ, արտաքին խտությունը 475 գ/մ³: Արտաքին տեսքը կլինի համապատասխան ներկայացված նկարի: *Չափսը՝ 56/180:*	լրակազմ	34800	34800	1	ք.Երևան Ի. Գասպարյան 33, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ	1	մինչև 15.06.2018թ.
2	18130000/5	Հատուկ արտահագուստ՝ արտահագուստ բանվորական (ամառային)	«Մադէլ» ՍՊԸ, ՀՀ	Ամառային արտահագուստ տղամարդու՝ բաճկոն և տաբատ:Բաճկոնը ուղիղ ուրվագծած,կարճեցված, ծալովի օձիքով, մկդակված ռետինաքուղ գոտիով, կենտրոնական պլաստիկօղլակաշղթայով մինչև օձիքը: Բաճկոնի վրա ֆունկցիոնալգրպաններ՝ լանջագրպաններ 2 հատ և ստորին գրպաններ 2 հատ:Լանջագրպանները մակադրված,փականներով: Փականների եզրերը նարինջագույնեզրակներով: Ստորին գրպանները շեղ, կիսածավալուն: Ձախ թևքի վրա մակադիրերկսեկցիավոր գրպան փականով: Փականի գույնը՝ նարնջագույն: Օձիքի եզրերը նարնջագույն եզրակով: Թևքերը երկար թեզանիքներով (մանժետ), կոճկումը սեղմակոճակով:Բաճկոնի հետևամասում ծալքեր ազատ շարժման համար: Բաճկոնի լայնքի	լրակազմ	28363.6	624000	22	ք.Երևան Ի. Գասպարյան 33, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ	22	մինչև 15.06.2018թ.

				կարգավորվում իրանում:Տաբատը ուղիղ ուրվագծած, մգդակված գոտիով և գոտին պահող օղակներով, կենտրոնական օղակաշղթայով:Տաբատի առաջամասում և հետևամասում մակադրվածգրպաններ: Առաջամասիգրպանները թեք կիսաձավալուն: Գոտիի կոճկումը կոճակով:Արտահագուստը ներսից ամբողջությամբ մաքրակարված (оверлок): Գործվածքը՝ 100% բամբակ, խտությունը՝ 250 գ/մ^2:Գույնը՝ կանաչ նարնջագույն դրվագումով: Գլխարկը՝ բեյսբոլկա, կլասիկ հինգ-սեպանի ձևով: Օղագոտին ուժեղացված բամբակյա երիզով ամբողջ շրջագծով: Գլխարկի վերևում կոճակ՝ երեսքաշված գործվածքով: Գլխարկի ծավալի կարգավորումը պլաստիկ օղակներով: Հովարը՝ երեսքաշված գործվածքով, չափը՝ 60x175x60 մմ, հաստությունը 1,2 մմ, պոլիէթիլեն կարակցումով: Բեյսբոլկայի բոլոր կարերը երկակի: Գործվածքը՝ 100% բամբակ, խտությունը՝ 280 գ/մ^2: Գույնը՝ կանաչ: Արտաքին տեսքը պետք է լինի համապատասխան ներկայացված նկարի: Փաթեթավորումը՝ գործարանային: Չափսերը՝ 48 - 2 լրակազմ, 50 – 6 լրակազմ, 52 - 8 լրակազմ, 54 - 2 լրակազմ, 56 - 1 լրակազմ, 58 – 2 լրակազմ, 60 – 1 լրակազմ:							
3	18130000/6	Հատուկ արտահագուստ՝ արտահագուստ բանվորական (ձմեռային)	«Մադէլ» ՍՊԸ, ՀՀ	Ձմեռային արտահագուստ տղամարդու՝ բաճկոն և տաբատ: Բաճկոն՝ հանովի գլխանոց (կապյուշոն) օղակաշղթայով և գլխանոցի ծավալի կարգավորմամբ, օձիք-կանգնակ բրդյա աստառով: Բաճկոնը երկար, սուպատային կենտրոնական մետաղյա օղակաշղթայով մինչև օձիքի վերջը:	լրակազմ	39750	318000	8	ք.Երևան Ի. Գասպարյան 33, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ	8	մինչև 15.06.2018թ.

					Օղլակաշղթան թաքցնող փականի լայնքը 5 սմ, իսկ կոճկումը 7 հատ մետաղյա սեղմակոճակներով: Բաճկոնի ներսի գրպանները օղլակաշղթայով և կպչյուններով, ներքին հողմապաշտպան թեզանիքներ (манжеты-напульсники), ներքին հողմապաշտման գոտի սիլիկոնե ռետինաքուղով: Բաճկոնի և թևքերի ստորին մասերի ծավալի կարգավորում, մգդակված աստառ: Բաճկոնի վրա ֆունկցիոնալ գրպաններ օղլակաշղթաներով՝ լանջագրպաններ 2 հատ և ստորին գրպաններ 2 հատ: Ձախ լանջագրպանը կպչյուն փականով կապի միջոցների համար: Թևքերի վրա մակադիր գրպաններ սև գույնի, կպչյուն փականներով: Կոկետկան մոխրագույն կարմիր դրվագումով: Բաճկոնի կողքերը և թևքերի տակը սև դրվագումով: Կիսակոմբինեզոն՝ կողային օղլակով սեղմակոճակներով և կենտրոնական մետաղյա օղլակաշղթայով, մգդակած աստառով, ծավալի կարգավորում գոտկատեղում, անատոմիկ թիկնակ անցումով ուսագոտիկի (бретели): Ուսագոտիկի լայնությունը՝ 3 սմ: Ուսագոտիկների կոճկումը ֆաստեքս օղլակով: Տաբատի ստորին մասը եզրից 23-25 սմ սև դրվագումով: Բաճկոնի և տաբատի վրա լույսը անդրադարձնող զոլակներ: Արտահագուստը ներսից ամբողջությամբ մաքրակարված (оверлок): Արտահագուստի գույնը՝ մոխրագույն, սև և կարմիր դրվագումով: Նյութեր. հիմնական գործվածք՝ միահյուսված (смесовая) 65% պոլիէսթեր, 35% բամբակ), ջրամերժ							

				տոգորումով: Հողմապաշտպան գործվածք՝ 100% պոլիեթեր: Բաճկոնի ջերմապահպանիչ գործվածքի նյութը՝ <<Холлофайбер>>, սինտեպոն, իսկ տաբատի <<Холлофайбер>>, սինտեպոն, աստառը՝ 100% պոլիեթեր: Արտաքին տեսքը պետք է լինի համապատասխան ներկայացված նկարի: Չափսերը՝ 52 - 2 լրակազմ, 54 - 2 լրակազմ, 56 - 1 լրակազմ, 58 – 1 լրակազմ, 60 – 2 լրակազմ:							
4	18130000/7	Հատուկ արտահագուստ՝ արտահագուստ բանվորական (ձմեռային)	«Մադէլ» ՍՊԸ, ՀՀ	Ձմեռային արտահագուստ տղամարդու՝ բաճկոն և կիսակոմբինեզոն: Բաճկոն՝ հանովի գլխանոց (կապյուշոն) օղլակաշղթայով և գլխանոցի ծավալի կարգավորմամբ, օձիք-կանգնակ բրդյա աստառով: Բաճկոնի աստառը մորթուց՝ շղթայի օգնությամբ հանելու և դնելու հնարավորությամբ: Բաճկոնը երկար, սուպատային կենտրոնական մետաղյա օղլակաշղթայով մինչև օձիքի վերջը: Օղլակաշղթան թաքցնող փականի լայնքը 5 սմ, իսկ կոճկումը 7 հատ մետաղյա սեղմակոճակներով: Բաճկոնի ներսի գրպանները օղլակաշղթայով և կպչյուններով, ներքին հողմապաշտպան թեզանիքներ (манжеты-напульсники), ներքին հողմապաշտման գոտի սիլիկոնե ռետինաքուղով: Բաճկոնի և թևքերի ստորին մասերի ծավալի կարգավորում, մգդակված աստառ: Բաճկոնի վրա ֆունկցիոնալ գրպաններ օղլակաշղթաներով՝ լանջագրպաններ 2 հատ և ստորին գրպաններ 2 հատ: Ձախ լանջագրպանը կպչյուն փականով կապի միջոցների համար: Թևքերի վրա մակադիր	լրակազմ	67826,08	1560000	23	ք.Երևան Ի. Գասպարյան 33, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ	23	մինչև 15.06.2018թ.

				գրպաններ սև գույնի, կպչյուն փականներով: Կոկետկան մոխրագույն կարմիր դրվագումով: Բաճկոնի կողքերը և թևքերի տակը սև դրվագումով: Կիսակոմբինեզոն՝ կողային օղլակով սեղմակոճակներով և կենտրոնական մետաղյա օղլակաշղթայով, մգդակած աստառով, ծավալի կարգավորում գոտկատեղում, անատոմիկ թիկնակ անցումով ուսագոտիկի (бретели): Ուսագոտիկի լայնությունը 3 սմ: Ուսագոտիկների կոճկումը ֆաստեքս օղլակով: Կիսակոմբինեզոնի ստորին մասը եզրից 23-25 սմ սև դրվագումով: Բաճկոնի և կիսակոմբինեզոնի վրա լույսը անդրադարձնող զոլակներ:Արտահագուստը ներսից ամբողջությամբ մաքրակարված (оверлок): Արտահագուստի գույնը՝ մոխրագույն, սև և կարմիր դրվագումով: Նյութեր. հիմնական գործվածք՝ միահյուսված (смесовая) 65% պոլիէսթեր, 35% բամբակ), ջրամերժ տոգորումով: Հողմապաշտպան գործվածք՝ 100% պոլիեթեր: Բաճկոնի ջերմապահպանիչ գործվածքի նյութը՝ <<Холлофайбер>>, սինտեպոն, իսկ կիսակոմբինեզոնի <<Холлофайбер>>, սինտեպոն, աստառը՝ 100% պոլիեթեր: Արտաքին տեսքը պետք է լինի համապատասխան ներկայացված նկարի: Փաթեթավորումը՝ գործարանային: Չափսերը՝ 48 - 1 լրակազմ, 50 – 8 լրակազմ, 52 – 11 լրակազմ, 54 - 3 լրակազմ:							
5	18130000/8	Հատուկ արտահագուստ՝ ձմեռային	«Մադէլ» ՍՊԸ, <<	Ունիվերսալ բաճկոն՝ հանգստի և զբոսաշրջության բոլոր տեսակների համար:	լրակազմ	100000	300000	3	ք.Երևան Ի. Գասպարյան 33,	3	մինչև 15.06.2018թ.

		ալպինիս տական արտահա գուստ		Ջերմաստիճանը՝ -10°C: Անջրանցիկ ծածկ՝ 2000մմ: 100% հերմետիկ փորվածքներ: Հյուսվածքը ջրային հովացուցիչ նյութերով, չի խոնավեցնում խոնավությունը:Քաշը՝ 0.8 – 1.35 կգ:Հիդրոֆիլային ծածկույթը (RET = 12) խանգարում է հագուստի մեջ խտացմանը:Տեսակը՝ ձմեռային:Բաղադրությունը (կտորը)՝ 100% պոլիեսթեր: Ջերմացուցիչ՝ 100% պոլիեսթեր:Վերջնամշակումը՝ 100% պոլիամիդ: Տաք, բազմաֆունկցիոնալ տաբատ՝նախատեսված ցուրտ եղանակի համար:Կազմը կազմում է 100% պոլիեսթեր: Հիմնադիր 100% պոլիեսթեր:Լրացուցիչ գործվածք՝ 100% պոլիամիդ:Տաքացուցիչը 100% պոլիեսթեր: Չափսերը XXL:					«Հայաէ րոնավի գացիա» ՓԲԸ		

Պարտադիր պայման է հանդիսանում ապրանքների չօգտագործված լինելը:
Անկախ ներկայացված բնութագրերից վաճառողը պարտավոր է նախատեսված համազգեստների վերջնական չափսերը ճշտել տեղում և նախքան ապրանքը մատակարարելը պարտավոր է կատարել ճշգրտում (примерка)՝ առկա թերությունները վերացնելու նպատակով:

ԳՆՈՐԴ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ
Ի.Գասպարյան 33
մ/ճ
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144

Գլխավոր տնօրեն

_____**Ա.Գասպարյան**
/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Մադէլ» ՍՊԸ
ք. Երևան, Մ.Ավետիսյան 8ա, բն.18
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, «Զեյթուն»

h/h 163598002315
ՀՎՀՀ 00907267

Տնօրեն

_____**Մ.Գասպարյան**
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
«13» ապրիլի 2018 թ. կնքված
N 2,64 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի										
Հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում							
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	18130000/4	Հատուկ արտահագուստ՝ էլ. զոդողի հատուկ համազգեստ	34800	34800	34800	34800	34800	34800	34800	**34800**
2	18130000/5	Հատուկ արտահագուստ՝ արտահագուստ բանվորական (ամառային)	624000	624000	624000	624000	624000	624000	624000	**624000**
3	18130000/6	Հատուկ արտահագուստ՝ արտահագուստ բանվորական (ձմեռային)	318000	318000	318000	318000	318000	318000	318000	**318000**
4	18130000/7	Հատուկ արտահագուստ՝ արտահագուստ բանվորական (ձմեռային)	1560000	1560000	1560000	1560000	1560000	1560000	1560000	**1560000**
5	18130000/8	Հատուկ արտահագուստ՝ ձմեռային ալպինիստական արտահագուստ	300000	300000	300000	300000	300000	300000	300000	**300000**

ԳՆՈՐԴ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144

Գլխավոր տնօրեն

Ա.Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Մադէլ» ՍՊԸ
ք. Երևան, Մ.Ավետիսյան 8ա, բն.18
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, «Զեյթուն» մ/ճ
հ/հ 163598002315
ՀՎՀՀ 00907267

Տնօրեն

Մ.Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 3
« » ապրիլի 2018 թ. կնքված
N պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « »
« » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները,

N	Մատակարարված ապրանքի							
	անվա-նումը	տեխնի-կական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		Մատակարարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանա-կացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանա-կացույցի	փաս-տացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանա-կացույցի	փաս-տացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » ապրիլի 2018 թ. կնքված
N պայմանագրի

ԱԿՏ N_____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն